

# ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՀԱՅՐԵՆԻՔ

Posted on November 21, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



## ԵԼ Հայ Գրականութիւն

Համօ Մոսկօֆեան, Պէյրուօ, 21 Նոյեմբեր 2011



"Կրնա՞յ գալ օրը  
Երբ այդ բոլորը  
Ինծի ալ թուի շատ սովորական  
Պարզ ու ընտանի  
Ինչպէս ամենուն, ինչպէս ամէն տեղ  
Եւ ես թօթափեմ  
Այս ջերմ բայց յոգնած  
Վիպական լեզուն  
Ու զգաստացած  
Ես ալ իմ կարգը  
Ինչպէս որ հարկ է  
Ու դառնամ "նորմալ"..."

### Վահան Զանոյեան

## ԵԼ Հայ Գրականութիւն

Համօ Մոսկօֆեան, Պէյրուօ, 21 Նոյեմբեր 2011



"Կրնա՞յ գալ օրը  
Երբ այդ բոլորը  
Ինծի ալ թուի շատ սովորական  
Պարզ ու ընտանի  
Ինչպէս ամենուն, ինչպէս ամէն տեղ  
Եւ ես թօթափեմ  
Այս ջերմ բայց յոգնած  
Վիպական լեզուն  
Ու զգաստացած  
Ես ալ իմ կարգը  
Ինչպէս որ հարկ է  
Ու դառնամ "նորմալ"..."

### Վահան Զանոյեան

- "Հայաստանի անկախութեան անակնկալ իրադարձութիւնը առիթ ընծայեց աննախընթաց շփումներու Սփիւռքի եւ Հայրենիքի միջեւ: Որպէս հզօր եւ անկործանելի ամբարտակ մը յանկարծ հրաշալիօրէն փլած ըլլար երկու ծովերու միջեւ՝ արծակելով զանգուածային եւ վայրագ երկու կողմանի ջրիտուժում մը ծովէ-ծով: Լեզուներու,

գաղափարներու, կեցուածքներու, մտածելակերպերու, կենցաղներու բախումը, որ յառաջացաւ այս ջրխառնուրդին հետ, եզակի երեւոյթ էր հայ իրականութեան մէջ, որ բարեբախտաբար տակաւին կը շարունակուի: Բոլոր անոնք, որոնք այդ հոսանքին մէջ նետուեցան, հարստացան թէ՛ հոգիով եւ թէ՛ մտքով”:

Այսպէս նկարագրեց 20-րդ դարու վերջին, հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան ամենէն անկիւնադարձային եղելութիւնը, Վահան Չանոյեան՝ երբ վերջերս Պէյրուսի իր պանդոկին մէջ հանդիպեցանք ու ծայնագրիչին յանձնեցինք իր միտքերը, խոհերը:

Հանրաճանաչ մտաւորականը, բանաստեղծն ու հայրենասերը՝ որուն կեանքի դեգերումները՝ որպէս արծուէբոյն Մուսա Լերան հերոսներու շառաւիղը՝ զինք տարած են Այնճարէն՝ Պէյրուս, Ուաշինկթըն, Ֆիլատելֆիա, Պահիբէյն, Լոզան, “առանձնատուն դղեակ” մըն ալ կառուցելու Հայաստանի գեղատեսիլ ու հինաւուրց Վայոց Ձորի բլուրներէն մէկուն գագաթը...: Վահան Չանոյեան նաֆթային հարցերու հմուտ մասնագետ է ու խորհրդատու՝ PFC Energy International-ի մէջ: Այս բոլորին մէջ, ան միաւորած է Արեւմտահայերէնն ու Արեւելահայերէնը:

✘ - “Նկատի առած Հայաստանի ներկայ դերը համայն հայութեան կեանքին մէջ՝ մեր երկու աշխարհաբար լեզուներու միջեւ նոր թափ առած շփումը, պատմական շատ կարեւոր երեւոյթ մըն է, որուն ամբողջական գնահատականը ընելու տակաւին ի վիճակի չենք այսօր: Ճանչնալով եւ ընդունելով այս երեւոյթը, ժողովածուն կ’ընդգրկէ կ’ընդգրկէ թէ Արեւելահայերէնով եւ թէ Արեւմտահայերէնով գրուած բանաստեղծութիւններ, որոնք լոյս կը տեսնեն միաժամանակ Մեսրոպեան ուղղագրութեամբ եւ ներկայ Հայաստանի որդեգրած ուղղագրութեամբ: Կան նաեւ լեզուական եւ ոճային դիտումնաւոր ծուլումներ երկու լեզուներու միջեւ:

Որպէս ազատամիտ, ժողովրդավար, խոհուն մտաւորական, Վահան Չանոյեան շատ լաւ կը հասկնայ, թէ այսօր հայ ժողովուրդը կը դիմակայէ վտանգաւոր մարտահրաւերներ ու գոյատեւելու եւ բարգաւաճելու միակ ուղին՝ միաբանութիւնն է: Մեր հարցազրոյցի ընթացքին, ան կոչ ըրաւ ձերբազատուելու հնացած, խաւարամիտ “աւանդոյթ”ներէն ու բաց աչքերով նայիլ իրականութեան ու մտածելու հայ ժողովուրդի վաղուան մասին՝ երբ գոյութիւն ունեցող երկու բարբառները, մեր հարստութիւնն են եւ ոչ թէ բաժանելու ծրագիր...:

Չանոյեան կը ծրագրէ ֆիլմ մը նկարահանել որ կը մարմնաւորէ կեանքի բազմաթիւ փորձութիւններէ անցած լրագրողի մը կեանքը, որ նոյն ինքն հայ ժողովուրդի ողիսականն է:

- “Այս է եղել իմ ինքնակառոյց հայրենիքն անմահ: Այս եմ ապրեցրել իմ հոգու սիրով ու իմ հոգու մէջ ես էլ իմ կարգին նրանով ապրել, պաշտպանուել իր մէջ... հաւատացել եմ որ այս է ապրել երբ չկայ՝ երկիր, երբ չկայ բանակ, չկար պետութիւն ու չկար աստուած...”:

## Բարի Վերադարձ ու “կանաչ ճանապարհ” կը մաղթենք Վահան Չանոյեանին:

